

ՀԻՊՆՈՏԻՍՄ

ԻԺԵԿԱՊԵՏ ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Հիպնոտիսմը ալսօր մի անհրաժեշտ գիտելիք է դառնել ոչ միայն բժշկի և իրաւաբանի, պատմաբանի և մանկավարժի, այլ և ամեն մի զարգացած մարդու համար, որը կամենում է գիտակցօրէն վերաբերւել զէպի իրան շրջապատող հաղարաւոր օտարոտի երևոյթները

Բժշկի համար հիպնոտիսմի ուսումնասիրութիւնը միանգամայն անհրաժեշտ է, որովհետեւ նա մի նոր լույս է գցում բազմաթիւ հոգեբանական երևոյթների վրայ, մեկնում է նեարդպալին (սխալ կերպով ջգալին անւանւած) հիւանդութիւնների մի մասը և մի նոր բուժական միջոց է դառնում:

Իրաւաբանի համար նա նոյնպէս մի շատ կարևոր գիտելիք է, որովհետեւ հիպնոտական քնի մէջ մարդ լինում է (ինչպէս կը տեսնենք լետոյ) լանցանքներ գործել մի ուրիշի ներքին շուքով, մի ուրիշի թելադրութիւնով, ինչպէս պնդում են մի շարք գիտնականներ:

Պատմաբանը հիպնոսի օրէնքներին տեղեակ լինելով, կարողանում է ալսօր բացատրել մի շարք պատմական խոշոր երևոյթներ, ինչպէս օրինակ, հնադարեան դաւանութիւնների և նորագոյն աղանդների ծագումը, մեծ մարդկանց հերոսութիւնների, մեծ հաւաքական շարժումների պատճառները:

Մանկավարժը ալս գիտութեան օրէնքներով է կրթում մանուկներին, և հիպնոտիսմը ալսօր մի լալն և փառաւոր տեղ է բռնում մանկավարժական մեթոդների շարքում:

Վերջապէս, իւրաքանչիւր զարգացած անհատ, կը հետաքրքրւի հիպնոտիսմով, երբ կ'իմանայ, որ ալս գիտութեան տւած տեղեկութիւնները կը մեկնեն նրան այն հաղարաւոր խորհրդաւոր երևոյթները, սրունք մօտենում են գերբնականին ու որոնք չալտի ևն ժողովրդի մէջ, կախարդութիւն, հմալութիւն, գիւլութիւն, աչքակապութիւն, տեսիլք (կամ անգիլք) քաջքոտութիւն, սպիրիտիզմ, գուշակութիւն, հրաշք և շատ ուրիշ անուններով:

Այսպէս հիպնոսական գիտութիւնը ընդգրկում է անպիսի մի քանակութիւն օտարոտի, անհասկանալի և գերբնական՝ անաւանած երեոյթների, որ առօրեայ կեանքի մէջ մենք ամեն քաղաքիոյում զգում ենք նորա ուսումնասիրելու կարիքը: Անհաւանական է, որ, գնալով, այս գիտութեան շրջանակը կը լայնանալ, ամփոփելով աւելի և աւելի մեծ քանակութիւնով, միմեանցից առերես տարբեր, երեոյթներ:

Հիպնոտիսմը ալսօր մի ընդարձակ գիտութիւն է դառել, նորա մասին ալսօր մի ամբողջ գրականութիւն է կազմել, և մենք մի պատասխանատու վստահութիւն ենք ստանձնում, մտադրելով մի կարճ-հաւաք ե, միննոն ժամանակ, մտաշելի և ամփոփ հասկացողութիւն տալ ճշմասագէտ ընթերցողներին այն բազմաթիւ երեոյթների մասին, որոնք չալոնի են հիպնոսական անունով:

Սակայն, համոզւած լինելով, որ այս անգեկութիւնների ժողովրդացնումն չափազանց օգտաւէտ կը լինէր հաղարաւոր, անբացատրելի կարծած, երեոյթներ մեկնելու և ալսով հաղարաւոր սնապաշտութիւններ և նախապաշարմունքներ վերացնելու ամբոխի միջոց, մենք ձեռնարկում ենք այս աշխատութեանը և մեծալոյս ենք, որ աւելի հմուտ հալ գիտնականներ կը լրացնեն տւածս թերի տեղեկութիւնները և ալսպիսով կ'արծարծեն հալ հասարակութեան մէջ մի շարք փրկարար զաղափարներ:

Այս ուսումնասիրութիւնը ընթերցողիս մատչելի անելու համար, մենք կ'աշխատենք, որքան կարելի է, օրինակներով խօսել:

Մեր նպատակն է կանգ առնել զլիսաւորապէս, ալսպէս ասած, հիպնոտիսմի փիլիսոփայութեան վրալ, ալսինքն ալոսել ալն շաւիղը, որով պիտի ընթանանք մենք, զանաղան հոգեբանական, հասարակական և ալ երեոյթների մեկնութեան հասնելու համար:

ԳԼՈՒԽ Ա.

Սէք է Հիպնոտիսմը:—Պատմական տեսութիւն.—Արեւմտիսմ, Բրայդիսմ և Ժամանակակից Ուսմունք:—Քննելու միջոցներ:

Ի՞նչ է ՀԻՊԵՈՏԻՍՄԸ?

Գիտութիւնը Հիպնոտիսմ ասելով—հասկանում է մի արւեստական (շարուցած) նեարդալին գրութիւն, որի մէջ ենթական երկալացնում է զանաղան փոփոխութիւններ թէ իւր զգացողական և թէ մտաւոր կեանքում: Եսկ բառացի թարգմանութիւնով նա նշանակում է քնանման գրութիւն, կամ քնածութիւն (ըժկապետ Բաբարկան):

Հիպնոսած էակը քնած է, բայց քնած է մի առանձին քնով, որը տարբերում է բազմաթիւ լատկութիւններով հասարակ քնից:

Հիպնոսական նիւնջը, գիտնականների մի մասի կարծիքով, ֆիզիօլօգիական (ալսիքն առողջ) գրութիւն է և կարող է չարուցւել արւեստական կերպով առողջ անձերի մէջ (Նանսիի դպրոց): Մի ուրիշ կարգ գիտնականներ հիպնոտիսմը ընդունում են իբրև հիւանդական, բայց անցողական երեոյթ, ուղեղի ժամանակաւոր անառողջ գրութիւն, որը նկատում է նեարդալիս հիւանդոտ անձերի մէջ (Պարիզի դպրոց) և որի արտալատութիւնները իրանց վրա խելագարութեան կնիք են կրում, (պր. Վիլիս):

Հիպնոտիսմի ուսմունքը լաւ հասկանալու համար միշտ պէտք է ինկատի ունենալ հետևեալ սկզբունքները.

1) Հիպնոսական երևութները, որքան էլ անհաւատալի և հրաշքային լինեն նրանք—բոլորը կարող են նկատուել և հիպնոսից դուրս, արթուն կեանքի մէջ:

2) Բժիշկները և հոգեբանները վաղուց արդէն նկատել, ուսումնասիրել և նկարագրել են այն բազմաթիւ երևութները, որոնց հաւաքումն, դասաւորութիւնը, որոնց ամբողջութիւնը կազմում է մեզ հետաքրքրող հիպնոտիսմը:

3) Հիպնոսի արտալատութիւնները գերբնական և սատանական բաներ չեն. նրանք չլ, ինչպէս և մեր բոլոր թէ ֆիզիքական և թէ բարոյական աշխարհի երևութները, ենթարկած են որոշեալ բնական օրէնքներին:

Այս սկզբունքները գնելուց լետոյ, մի ակնարկ գցենք հիպնոտիսմի զարգացման պատմութեան վրայ:

ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ինչպէս կը տեսնենք լետոյ, հիպնոսի երևութները լաւանի էին պատմական ամենահին ժամանակներում:

Ասենք իսկոյն, որ նրանք ահագին դեր են խաղացել նոսնա ազգերի զաւանդութիւնների մէջ և միշտ միջոց են տուել քուրմերին և առհասարակ եկեղեցական պաշտօնեաներին կոլրութեան և ահի մէջ պահել տղէտ ամբոխը, որը, չը կարողանալով մեկնել հիպնոսական օտարոտի երևութները, նրանց մի գերբնական էակի էր վերագրում:

Քառասուն դար մեզից առաջ Եգիպտոսում լալտնի էր հիպնոտիսմը: Արդէն 2400 տարի է անցել, երբ Հնդկաստանում Փակիրները և ջօդիները ծանօթ էին նորա արտալատութիւնների հետ: Յունական և հռոմէական հոգեկան աշխարհ լի էր սնապաշտութիւններով և նախապաշարմունքներով, որոնք պահպանւում էին հիպնոսայ, և երևութների ազդեցութեան

Ներքույ, Բրիտանացիները չը վերացրեց աշխարհից հիպնոսի ազդեցութիւնը, ընդհակառակը ինքը դառաւ հիպնոսեցնող մի նոր միջոց, ինչպէս ապացուցանում է խաչակրողների արշաւանքները և ինկվիզիցիայի կատաղութիւնը:

Թողնելով մեր աշխատանքի երկրորդ մասին հիպնոսիամի զարգացման ալս առաջին աստիճանները, դիմենք ուղղակի ալն շրջանին, երբ հիպնոսական ննջի արտաբնականութիւնները լարուցում են արեւստական կերպով: Այս գիտնական շրջանը սկսւում է 1778-ին և շարունակւում է մինչև մեր օրերը: Հիպնոսիամի ալս մի դարի կնճառ պատմութիւնը ընթացողին հասկանալի դարձնելու համար, մենք, պրոֆ. Գրասէին հետևելով, կը բաժանենք նրան երեք ժամանակամիջոցների,

I) Մեամերիսմ, II) Բրադիսմ և III) Ժամանակակից շրջան:

I ՄԵԱՄԵՐԻՍՄ ԿԱՄ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՄԱԳՆԵՒԻՍՄՈՒԹԻՒՆ (Magnétisme animal.— ЖИВОТНЫЙ МАГНЕТИЗМЪ) (1778—1841):

Մեամեր և նորա ուսմունքը.— Վենդանական Մագնիսութիւն.— Փսուսներ.— Մագնիսական Տաշա.— Ցնցումներ Դժողք.— Գիտնական ժողովները ըողքը.— Պիլեզկէլիւր. Աբեղայ Ծարիա:

1778 թ. գալլիս է Պարիզ մի մարդ, որը զարմանալի հանդիմութիւնով խոստանում է իրադարձել մի աստուածալին հրաշք, ալն է՝ բժշկել անբուժելի հիւանդներին: Այդ հրաշքի համար դեղեր հարկաւոր չէին. բըժշկութիւնը կատարւում էր սկեսնդանական մագնիսութեան անլաղթելի զօրութիւնով: Վերականգնեցնելով հին ցնորական ուսմունքները, նա քարոզում էր, որ մի հեղուկ կալ, մագնիսական հեղուկ, որը լցնում է տիեզերական անհուն տարածութիւնը, մտնում է տիեզերքի մարմինների, մեր հողագնտի, և երկրի վրայի շնչաւոր էակների և անշունչ առարկաների մէջ: Այս մագնիսութիւնն է ալն աղդեցութեան պատճառը, որը, Պարացելսի վարդապետութեան համաձայն, իրբ թէ ունեն երկնային դիւրը միմեանց վրալ, իսկ սրանք երկրիս երեսի բոլորի և կենդանիների վրալ: Մեամերը Պարացելսի ուսմունքը աւելի ընդարձակելով և աւելի ցնորական—անմիտ դարձնելով, աւելացրեց, որ ալս հեղուկը մի անձն կարող է մի ուրիշ անձի նհարդերի մէջ ներլցնել և ալսպիսով բժշկել ամեն տեսակ հիւանդութիւններ: Վենդական մագնիսութիւն անւանեց նա տիեզերական հեղուկի ալն մասը, որ իբր թէ շրջում էր և կէսնդանիների երակների մէջ:

Այս փրկարար հեղուկը կարող է մարդուց անցնել անշունչ առարկաներին և փոխադարձաբար: Նորա քանակութիւնը մի անձի մէջ աւելի մեծ է, քան թէ մի ուրիշի, ալնպէս որ առաջինը կարող է իր մանգիսութեան

մի մասը ներլցնել քիչ ունեցողի, կամ բոլորովին մաղձիսութիւն չունեցողի նեարդերի մէջ, Այս հեղուկի ներլցնումն ուրիշի նեարդերի մէջ կատարում է կամ երկու անձերի անմիջական կցորդութիւնով, կամ մի որ և է միջանկեալ առարկայի, օրինակ երկաթէ կամ ապակիի փալտի միջնորդութիւնով, կամ մինչև անգամ առանց կցորդող առարկայի, ուղղակի օդի միջոցով...

Անս Մեամերի անհեթեթ բաւց թող ուղեղներ փափշտակող վարդապետութիւնը, որը նա մեծ չափով ծառայել տեսց իւր շահերին.

Համաձայն այս ուսմունքին Մեամերը աշխատում էր ներլցնել իւր մագնիսական հեղուկը հիւանդների ջղերի մէջ և այդ նպատակով գործ էր դնում, ինչպէս ասում են, պասսեր (passes), որը թող ներսի մեղ քսում են եր բաւում թարգմանել: Անս ինչպէս էին անում այս քսումները.

«Դուք նստում էք հիւանդի հանդէպ, ծնկները ձեր ծնկների մէջ սեղմելով և ձեռքերը քսելով իջեցնում էք ուսերից մինչև բութ մատները: Եր քանի անգամ այս քսումը կրկնելով, դուք լցնում էք ձեր մագնիսութիւնը հիւանդի ջղերի մէջ և պլն»...

Անս Մեամերի բժշկութեան մեթոդը, կարճ միջոցում վիճննացի մեծ հրաշագործը աչնպիսի մի հուշակ ու ժողովրդականութիւն ձեռք բերել, որ ոչ միայն Ֆրանսիայից, այլ և Եւրոպայի բոլոր անկիւններից հիւանդներ թափեցան Պարիզ: Այս մի արտասովոր ոգեւորութիւն էր, մի փափշտակումն էր, որը հազարաւոր անձեր էր մղում զէպի Մեամերը և ոսկիներով լցնում էր նորա արկղը:

Շուտով հիւանդների թիւը աճեցան թազմացաւ, որ Մեամերը այլ ևս ժամանակ չէր գտնում ամեն մէկին առանձնապէս մագնիսել, վասնորով նա հնարեց իւր հուշակաւոր Տաշտը (bague magnétique). Այս մի մեծ արկղէր, որի մէջ դարսած էին «մագնիսած ջրով լի շշեր» և որի խուփի բազմաթիւ ծակերից դուրս էին ցցում հորիզոնական ուղղութիւնով կռած ձողեր: Հիւանդները չարում էին այլ տաշտի շուրջը, և այդ ձողերի ծայրերը իրանց մարմնի հիւանդ մասին զիպցնում ու ալսպիոով իբր թէ մագնիսանում, ալսինքն ընկնում էին սարսափելի ցնցումների և ընդոստման մէջ, որը ժամեր էր տևում: Յետոյ այս յնդւոյներին վերցնում—տանում էին մի առանձին սենեակ, որը կնքել էին ցնցումներ և դժողք ահաւի անուշով: Այս յնդւոյները միւսմերեանների ուսմունքով փրկարար ազգեցութիւն ունեն հիւանդների վրայ և ապացոյց են նրանց աւողջանալուն: Մեամերը, հագին հարստութիւն դիզելուց և չլսած հուշակ ձեռք բերելուց լստոյ, հանդգնեցաւ դիմել գիտնական ժողովներին նրանց հաւանութիւնն էլ ստանալու համար: Բայց Պարիզի ֆակուլտետը մերժեց քննել անգամ այս անհիմն ուսմունքը և մինչև անգամ առաջարկեց իւր անդամներից մէկին, յսիշի Դելոնին, որը Մեամերի հետեւողներից մէկն էր, հրաժարել մալինիսութեան վրայ իւր ունեցած վնասակար դադափարներից:

Սակայն այս աղմուկին վերջ տալու համար Լիդոլֆիկոս XVI-ի հրամանով գիտնականներից մի մասնաժողով կազմեց կենդանական մազնետիզմը քննելու համար։ Այս մասնաժողովը, ինչպէս և գիտութեան ակադեմիան, վերջնականապէս դաաապարտեց Մեսմերի ուսմունքը և բժշկութեան մեթոդը, նրան ֆիասակար և անբարոյական չափաբարելով։

Այսպէս Մեսմերի ցնորական վարդապետութիւնը տապալւեց. բայց նրա նկատած երեւոյթները մնում են մինչև այսօր ևս իբրեւ հիպնոսական երեւոյթներ։

1784 թ. «Մեծ շարլատանը» մեկնեց Պարիզից, թողնելով մի արքաշակերտներ, Սրանց մէջ ամենահռչակաւորն էր մարքիզ Պիւլիզեզիւր (Puysegur), որը աչնպիսի կաաարեւագործութեան հասաւ, որ մազնիսեց մի ծառ, որի ստւերի տակ կարող էին ժողովել 130 հոգի։ Բայց Պիւլիզեզիւրի անունը պիտի մնալ հիպնոտիսմի պատմութեան մէջ այն պատճառով, որ նա առաջին անգամ նկարագրեց արւեոտական քնաչածութիւն կամ քնաշրջութիւնը (լուսնոտութիւն—Somnambulisme expérimental)։

Այս շրջանին պատկանող երրորդ անձնաւորութիւնն էր պորտուգալացի արեղալ Ֆարիան։ Սա ճանապարհորդել էր Հնդկաստանում և մի վտահ ու նոր հալեացք էր կազմել մազնիսական երեւոյթների վրայ։ Բոլորովին լերքելով մազնիսական հեղուկի գոլութիւնը, մեսմերեանների նկատած երեւոյթները բացադրելու համար, նա առաջ բերեց մի նոր դործիչ, աչն է ներշնչումն (suggestion—hypnotisme)։ «Կարծեմ պարզ է արդէն, ասում է նա, որ անմտութիւն է մի որ և է մազնիսական հոսանքի գոլութիւն երթադրել»։ Ֆարիան մազնիսական քունը նմանեցնում է հասարակ քնին, Մենք կը տեսնենք, որ աչս հալեացքը մեր օրերում պաշտպանում է նանսիի համալսարանի պրոֆեսորներից, որոնց ուսմունքի հիմնաքարն է դառել նա։

Մենք երկար կանգ առանք հիպնոտիսմի պատմութեան այս շրջանի վերալ, որովհետեւ շատ գրաւորների մէջ դեռ գործ է ածւում մազնիստիսմ, մազնետիսօր (մազնիսող), մազնիսւող, կամ մնամերիզմ, մեսմերեաններ, փոխանակ հապնոտիսմ, հիպնոսական նինջ, հիպնոտող բառեր։ Բացի ալդ, մեսմերեան շրջանի ուսմունքների մէջ մենք գտնում ենք արդի հիպնոսական գիտութեան սերմերը։

II ԲՐԱՅԴԻՍՄ ԿՍՄ ՀԻՊՆՈՏԻՍՄ (1841—1874)

Ժէմս Բրայդը (James Braid) և աւքերի յոգեաւութեան լիզորիան.—Բրայդը հիպնոտիսմի հիմքն է դնում։—Բրայդօյն բժիշկ Ազան։—Պրոֆ. Լիւբրոն։

Մեսմերի և Ֆարիալի գաղափարները և ուսմունքը մոռացւեցան։ Ֆրանսիական լեզալիստութիւնը, Նապօլէոն I ի ահուկի և աղետալի կռիւ

ները հեռացրեցին հիպոտոսմի գիտնական ուսումնասիրութիւնը։ Սակալն երկրի ամեն կողմերում և արտասահման շրջում էին մազնետիզորներ (մազնիսողներ), որոնք հրապարակական ներկայացումներ էին տալիս և բեմի վրայից մազնիսական երևութներ էին ցոլց տալիս հանգիսականներին, 1841 թ. գալիս է Մանչեստեր ասլո մազնետիզորներից մէկը, Լաֆոնտէն անունով։ Թիշիկ Զեմս Բրալդը, գիտելով ասլո ենթականերին, որոնց Լաֆոնտէնը մազնիսում էր, նկատեց, որ քսումների ազդեցութեան ներքոյ ամենից առաջ մազնիսողի աչքերը շփակւում են։ Այս առերես անշնչան հանգամանքը բաւական եղաւ Բրալդին հիմնել իւր հռչակաւոր թէօրիան, որը չափոնի է աչքերի չոգնածութեան թէօրիան անունով։

Եթէ ենթակալի աչքերը խփւում են, ասլո կը նշանակէ, որ նրանք լոգնում են և լոգնում են նրանից, որ ուշիուշով նաւում են մազնիսողին ու բեւեւում են նրա ձեռների վրա քսումների ժամանակ։ Երեւի, աչքերի լոգնածութիւնը անցնում է ուղեղին, որը նույնպէս լոգնում է և հէնց ուղեղի ընկճման էջրութիւնից առաջանում են մազնիսական օտարոտի երեւութները։ Այս է աչքերի լոգնածութեան թէօրիան։

Բրալդը, իբրև լաւ և բարեխիղճ գիտնական, չէր կարող ի հարկէ հենթադրութիւններով բաւականանալ և նա լոգնիկաբար լետեսցրեց, որ եթէ բոլոր գաղտնիքը աչքերի մկանների թուլանալու մէջն է, ուրեմն հարկ չը կալ քսումներ անել, տաշտեր ստֆոճել և ասլո, ասլ բաւական պիտի լինի, որ ենթական սեւեռի իւր հալեացքը մի որ և է առարկայի վրայ և նա պիտի ընկնի մազնիսական քնի մէջ։

Փորձը արդարացրեց Բրալդի լոյսերը և նա քնեցրեց իւր ընկերին, իւր կնոջ և ուրիշներին, ստիպելով նրանց նախել մի քանի բոպէ մի պըսպըղուն առարկայի վրա (չշի վզին), որը նա պահում էր որոշեալ հեռաւորութիւնով։

Այս գիւտը հիպոտոսմի հիմունքը դրեց և ասլ ուսմունքը չափոնի է Բրալդի ուսմունքով։

1861 թ. Բորդօցի բժիշկ Ազանը (Azam) հրատարակեց մի վերին աստիճանի հետաքրքիր ուսումնասիրութիւն տիկին Ֆելիդա X-ի (Félicia X) օտարոտի հիւանդութեան մասին և առաջ բերեց մի շարք նոր հիպոստական երևութներ։

Հինգ տարուց լետու Նանսիի համալսարանի պրոֆեսոր բժիշկ Լիւբօն (Liebeault) տպագրում է մի նշանաւոր գրածք ասլ վերնագրով. «Արեւստական քուն և համանման դրութիւններ», որի մէջ հեղինակը մշակում է հիպոտոսմի փիլիսոփայական մասը, աշխատելով մօտեցնել հիպոստական նինջը հասարակ քնին։

III ԺԱՄԱՆԿԱԿԻՅ ՈՒՍԾՐՈՒՆՔ ԿԱՄ ՅԱՐՈՒՑԱԾ (ԱՐԻԵՍՏԱԿԱՆ) ՔՆԱ- ՅԱՄՈՒԹԻՒՆ (somniaambulisme provoqué)

Շարլ Ռիշէ.— Պրոֆեսոր Շարկո և մեծ Հիպնոսիստ.— Նանսիի հիպնոսագէտները:

Լիբբօյի գիրքը արձագանք չը գտաւ գիտնական գրականութեան մէջ և Հիպնոսիստի հարցը կրկին քննեց մինչև 1875, երբ բժիշկ Շարլ Րիշէ (Charles Richet) հրատարակեց իւր պատական հետազոտութիւնները մեզ հետաքրքրող հարցի մասին: Մի քանի տարուց յետոյ, 1878 թ., Պարիզի պրոֆեսոր Շարկոն իւր հաճաքող, աշակէտ ասած, դիտողական ընդունակութիւնով մաքրեց հիպնոսիստի գիտութիւնը ենթադրութիւններից և գծեց այն շաւիղը, որով պէտք է ընթանալ գիտնական հետազոտողը, եթէ կամենում է հաւատարիմ մնալ գիտնական հետազոտութիւնների կանոններին:

Շարկոն չափեց գիտնական աշխարհին իւր երկարամեայ աշխատանքի պտուղը, իսկ 1882 թ. Նա Նեքկալացրեց Պարիզի Ակադեմիային իւր Նոր ուսումնքը փորձնական հիպնոսիստի մասին: Այն զեկուցման մէջ մեծ գիտնականը նկարագրում է այն հիպնոսական դրութիւնը, որը ուսումնասիրել էր Նեարդալին հիւանդների վրայ և որը չափն է աժիմ Մ և ծ Հիպնոսիստիստ անունով:

Համարեալ միևնույն ժամանակ բժիշկ Դյումոնպալիէ (Dumontpal-lie) մի շարք զարմանալի փորձեր է անում հիպնոսածների յղաչնութեան վրայ, այն ինչ Դյումանիայում Հալդենհայն, Դրիւցներ, Բերգեր և ուրիշները նույնպէս զբաղւում էին Նոր գիտութիւնով:

Շարկոն հիմնեց մի դպրոց (շկոլա), որից դուրս եկան մի շարք լուրջ հիպնոսագէտներ և աւսօր հիպնոսիզմի զարգացման պատմութեան մէջ ամեն քաջափոխում պատահում ենք մի մեծ քանակութիւն չափնի անունների, ինչպէս. Րիշէ, Ֆերէ, Բենյար, Պրոֆ. Լիւլիս, Դյումոնպալիէ Մանյան, Ժիլ դը Լա Տուրետ, Պրոֆ. Բրուասրդէլ, Պոլ Ժանէ, Լադամ, Իւնգ Պիտր և այլն: Մինչդեռ Պարիզում հիմնւում էր Շարկոյի դպրոցը, Նանսի քաղաքում զարգանում էր մի ուրիշ շկոլա, որի հեղինակաւոր ներկայացուցիչներն են՝ Լիբբօ, Բոնիս, Բերնալ և իրաւագէտ Լիեթուա, որը ուսումնասիրում է հիպնոսիստը իրաւաբանական տեսանկէտից:

ՀԻՊՆՈՏԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մեզմ և յանկարծակի միջոցները.— Ծիդիկական և հոգեկան ձևեր.— Հիպնոսութիւններ շնչումով.— Բերնալմի.— Որինակներ.— Հիպնոսութիւն հեւտից, նախկին միջոցով (Լիեթուաի փորձերը).— Զարթեցնելու միջոցները.— Հասակի, սեռի ազդեցութիւնը, Հիպնոսիստ կենդանիների մէջ:

Հիպնոսական քուն չարուցանելու (կամ կարճ անունք. քնեցնելու) միջոցները այնքան բազմաթիւ են, որ դժւար է մի առ մի նկարագրել:

Նրանց, Որքան էլ բազմաթիւ լինեն նրանք, բոլորը միևնույն կերպով են ազդում, այն է՝ բարւածելով մեր զգայարանքները և նրանց միջնորդութիւնով մեր ուղեղը, Ուրեմն գրգռելով մէկի տեսողութիւնը, լսողութիւնը, շոշափումն, մենք կարող ենք նրան քնեցնել, Եւ որովհետեւ բարւածել մեր զգայարանքները կարելի է կամ լանկարծակի կամ կամացիկ կերպով, ուրեմն և հիպնոսելու միջոցները կը լինեն չափաւորակի և մեղմ միջոցներ:

1) Մեղմ միջոցները մի որոշեալ ժամանակամիջոց (մի քանի րոպէ) շարունակ գրգռելով մեր զգայարանքները լողնեցնում են նրանց, Սրանց լողնածութիւնը անցնում է ուղեղին, և ենթակա՛ն քնում է:

Մեղմ ձևերը գործ են դրում մեր երեք զգայարանքների վրայ միայն. ա) տեսողութեան. քսումներ (Մեսմեր, Րիշէ), հակացքի բնեւորումն մի որ և է առարկայի վրայ (Ֆարիա, Շարկո), ենթական անշարժ նալում է փորձողի աչքերի մէջ, և այլն:

բ) Լսողութեան. միակերպ ձայները, երաժշտութիւնը, միակերպ ընթերցումներ լսելը, կառքով կամ սալով երկար գնալը, ժամացուցի չդիչդիցը և այլն: Այս վերջին միջոցով Հալոնհանը երկու րոպէսով քնեցրեց երեք ուսանողներ:

գ) Շոշափման. Մի քանի անձերի մարմնի վրայ կան կէտեր, որոնց շփումն առաջացնում է հիպնոսական շինջ. Նրանք բաւական է կմթել ականջի բլթակը, կամ ծծի պտուկը, կամ մատերի ծալերը, որ հիւանդը քնի մէջ ընկնի: Այս կէտերը չալտեր են հիպնոսածին կէտեր անունով (points hypnogènes):

2) Յանկարծակի ձևերը ներգործում են միևնույն կերպով, բայց քունը աւելի արագ է բարուցում:

Այսպէս. տեսողութեան միջոցով քնեցնելու համար պէտք է մի լանկարծակի, անսպասելի լուս արձակել ենթակայի աչքերին (օրինակ. ելեքտրական լուս) Պրոֆ. Լիպիսը ալդ նպատակով է հնարել իւր պատուով հաջելին:

Իսկ լսողութեան վրայ ներգործելու համար կարելի է հրացան արձակել, բարաբան պարկել և այլն: Մուրճ-ի չարածը, ամպի որոտումն, կալծակը և այլն կարող են տրամադրած ենթականերին մի վալրկենում քնեցնել, Պարիզի Սալպետրիէր հիւանդանոցում, որի մէջ դասախօսում է պրոֆ. Շարկոն և որտեղ խնամում է մի ահագին քանակութիւն նեարդալին (ջղալին) հիւանդ կանանց, լաճախ գործէ ածւում այս չափաւորակի միջոցները, Պրոֆ. Րիշէն իւր գրքի մէջ զետեղել է մի քանի լուսանկարներ, որոնք ներկայացնում են զանազան դրութիւնների մէջ մի խումբ կանաչք, որոնց արձանացրել է բարաբանի, ցիմբալի մի ուժգին չարած:

Հիպնոսելու այս երկու տեսակ միջոցները (մեղմ և լանկարծակի) պէտք է լաւ զանաւանել միմեանցից, որովհետեւ մեղմ միջոցներով

մենք ընդհանրապէս ւարուցանում ենք լեթարգիա (անզգայական քուլ), իսկ անկարձակի ձևը ենթակային ուղղակի քարացման մէջ է քցում: Այս է պատճառը, որ պատերազմի դաշտերում չաճախ գտնում են դիմադրողներ, որոնց, օրինակ, ռմբի պալթիւնը արձանացրել էր ահա դիրքի մէջ, ինչ գիւքում որ դաշտում էին նրանք պալթիւնի վաւրկենին:

Յիշածս միջոցները, կրկնում ենք, հիպնոսական քուն են լարուցանում, ներգործելով ուղեղի վրա մեր զգայարանքների (լսողութեան, տեսողութեան և շոշափման) միջնորդութիւնով:

Ողբա հիպնոսելու ֆիզիկական միջոցներն են:

Կալ և մի ուրիշ կարգի միջոց.— ալդ՝ ներշնչումն է: Կեռ Ֆարիան, որը չեղբել էր քուլմների կարևորութիւնը, գործ էր ածում ալդ միջոցը: Նա մօտենում էր ենթակային և հրամայական ձայնով գոռում էր՝ «քնիր» ու ենթական քնում էր: Նանսիի գիտնականները վերանորոգեցին Ֆարիալի մեթոդը և ալսօր նրանց հիպնոսելու միակ միջոցն է ալդ: Այս երկրորդ կարգի միջոցը անւանում է «հիպնոսութիւն ներշնչումով»:

Ահա ինչպէս է քուն ներշնչում բերնալմը:

Հիպնոսողը հաւատացնում է հիւանդին, որ երկիւղալի ոչինչ չկալ և մօտաւորապէս ալսպէս է խօսում: «Մտածեցէք միայն, որ դուք պէտք է քնէք: Դուք արդէն ծանրութիւն էք դրում ձեր արտևանքի մէջ, անւանսիկ ձեր աչքերը փակում են, ձեր գլուխը թուլացած կոր է ընկնում, դուք սկսում էք քնել, դուք քնած էք» և հիւանդը քնում է:

Այս և հետևեալ ձևերը հիւանդին անւանում է հոգեկան ձևեր, Ահա մի քանի օրինակներ:

Պրօֆ. Հալդէհան մի ուսանողի ասում է, որ մինեոն օրը ժամը 4-ին նա կը քնի և գուշակութիւնը կատարւում է: Մի հիւանդ կին համոզւած էր, որ բժիշկը միշտ կարող է նրան քնեցնել և ամեն նորա երևալուն, հիւանդը իսկոյն ընկնում էր հիպնոսական ննջի մէջ: Մի բաժակ ջուր են տալիս հիւանդին, իբրև մադնիսած ջուր, և նա, խմելուց չետոյ, իսկոյն քնում է: Կամ հաւատացնում են, թէ, դռների փեղկերը կարող են նորան քնեցնել և հէնց որ ձեռ է տալիս ալդ փեղկին, իսկոյն հիպնոսանում է:

Այս հոգեկան միջոցը կարող է ազդել և հեւելից: Ալսպէս, Լիեժուան մի արկղիկ կոնֆէտ է ուղարկում մի օրիորդի և կցորդում է ալս տոմար. «Եթէ օրիորդ Ա. ալս չաքարեղէնը մէկ մէկ կ'ուտի, նա ոչինչ չի զգալ, իսկ եթէ նա միանգամից երկուսը բերանը դնի, նա անշուշտ կ'քնի հինգ կամ վեց րոպէ: Ջարթնելիս օրիորդ Ա. շատ տխուր կը լինի և մինչև անգամ կ'արտասալի: Բայց ներս կը մտնի պ. Բոնիսը, որը նրա ձեռը կը սեղմի և կը մխիթարի.— 21 փետրարի 1885 ամի»): Գրածը բոլորը կատարւում է, մինչև անգամ օրիորդը երևակալութիւնով տեսնում է պ. Բոնիսին: Լիեժուան

կարողացել է նամակով նանսի քաղաքից մի հեռաւոր գիւղում քնեցնել օրիորդ Հին և Նրան բազմաթիւ հրամաններ կատարել տալ:

Հեռախօսի միջոցով էլ կարելի է հիպնոսել: Հիպնոսելու միջոցները և ձևերը կարող են չափազանց բազմաթիւ լինել, սակայն երբ ուշով քնեցնու լինենք Նրանց ազդեցութիւնը, կը տեսնենք, որ թուրը միևնոյն կերպով են ազդում,—զղրդում են մեր նեարդալին սխտեմը:

Նկատենք, որ ամեն ենթակալի հնչող է հիպնոսել: Կան ալմպիսիներ, որոնք երկար ժամանակ ընդդիմանում են, և այդ տոկունութիւնը երբեմն ծիծաղաշարժ պատահումն քներ է առաջացնում: Ապալէս Ֆարիալի աշակերտ և ընկերը ցանկանում էր քնեցնել մէկին հալեացքի սենեակում, ապինքն իւր հալեացքը ենթակալի աչքերի մէջ գցելով: Մի քանի րոպէից չտող Ֆարիան ներս է մտնում և զարմացած տեսնում է, որ իւր աշակերտը քնած է, ալն ինչ ենթական սպասում է, որ պէտք է քնի: Սակայն ալն անձերը, որոնք մի քանի անգամ ենթարկւել են հիպնոսի, զարմանալի հնչողութիւնով են քնում: Շարկօյի մի քանի հիւանդների աչքերին բաւական էր մի փալլուն բան մօտեցնել, ու մի վալրկեանից չտող նրանք ընկնում էին քնի մէջ: Մի քանի կանալք ալնքան թուլ են լինում, որ հէնց որ նալում են հալելուն, իսկոյն քնում են: Մի աղջիկ չէր կարողանում օղակներ կարել, որովհետև իսկոյն հիպնոսանում էր:

Ամենահնչող և ամենաընդունաւ ձևն է մի փալլուն առարկալի նալելը: Դուք նստեցնում էք ցանկացողին մի աթոռի վրալ և բռնում էք նրա աչքերի առաջ, բաց Նրանց առանցքից (օգն) մի քիչ բարձր, մի որ և է փալլուն առարկալ և ստիպում էք ենթակալին սենեակ իւր հալեացքը ալդ առարկալի վրալ: Հարկաւոր է, որ սենեակում լուութիւն տիրէ և մթնաշաղ լինի:

Ձարթեցնելու համար բաւական է լինում փչել աչքերի մէջ: Սակայն երբեմն ալդ միջոցը չի չաջողում և ստիպաւ ենք աւելի ազդու միջոցների դիմել:

Արդեօք ամեն մարդ ընդունակ է հիպնոսուելու?

Նանսիի դպրոցը պնդում է, որ 10 հոգուց 9 ը կարող են ենթարկւել հիպնոսական քնի, իսկ Պարիզի դպրոցի կարծիքով միալն 30%-ը, որոնցից միալն 15%-է հասնում բնաշրջութեան աստիճանին: Այս ահագին տարբերութեան պատճառը կը տեսնենք չտող:

Հասակը: Հնչող հիպնոսում են երեխաները և պատանիները մինչև 21 տարին: Ալնուհետև հիպնոսողների թիւը քչանում է մինչև 80 տարին, որից չտող կրկին բարձրանում է:

Սեռը: Կանանց սեռը, ինչպէս աւելի գիւրազրգիւրը, աւելի հնչողութիւնով է ենթարկւում հիպնոսի, մանաւանդ նեարդալին կանալք:

Փորձեր եղան կենդանիներին էլ հիպնոսելու (գորտեր, հաւեր, ձիեր):

ԳԼՈՒԽ Բ.

ՀԻՊՆՈՍՍԿԱՆ ՔՆԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարկոյի ուսմունքը—Մեծ Հիպնոտիսմ և նորա աստիճանները, —Լեթարգիա, (ան-
զգայական քուն), Կատալեպսիա (քարացումն) և Սոնամբուլիսմ (քնայածութիւն
կամ քնաշրջութիւն),

Մ Ե Մ ՀԻՊՆՈՏԻՍՄ

Մենք տեսանք, որ 1878 թ. պրոֆ. Շարկոն Պարիզում իւր Սալ-
պետրիէր կոչւած հիւանդանոցի մէջ ուսուցեց մեզ հիպնոտիսմը իբրեւ
նեարդակին հիւանդութիւնների մի ճիւղ, Այս ուսմունքը, որը չափնի է
գիտութեան մէջ Շարկոյի, Սալպետրիէրի կամ Պարիզի ուսմունք անու-
նով, ալսօր համարուում է դասական վարդապետութիւն, Մի շարք գիտ-
նականներ, պրոֆ. Շարկոյի հետևողները, կամ ուղղակի նրա աշակերտ-
ները պահպանում են ալսօր մեծ գիտնականի 1878-ի խորը գիտնական
զաղափարները,—ալնքան խորիմաց էին նրանք և ալնքան զգուշաբար
չափնած:

Տեսանք նորնպէս, որ Նանսի քաղաքում ծաղկել է մի ուրիշ դպրոց,
որը ալք պատճառով չափնի է Նանսիի դպրոց անունով:

Ներկու դպրոցների ուսմունքների մէջ մեծ տարբերութիւններ կան,
Այս ուսումնասիրութեան մէջ մենք կը ղեկաւարենք գլխաւորապէս պր.
Շարկոյի ուսմունքով, որովհետեւ նա մեզ աւելի գիտնական է թւում և աւելի
մօտ է, մինչդեռ մենք երկար տարիներ ներկայ ենք եղել Պարիզում ալք
գիտութեան զարգացման և մշակութեան ու սնուցւած ենք Պարիզի դպրոցի
զաղափարներով:

Հիպնոտիսմի քնի արտապատութիւնները ալնքան բազմաթիւ և մի-
մեանցից տարբեր են, որ հարկ էր դասաւորել նրանց ե մի գիտնական կլա-
սիֆիկացիա ստեղծել: Պրոֆ. Շարկոն, ուսումնասիրելով հիպնոտիսմի տե-
րիկ անւանւած կանանց վերալ ¹⁾, կարողացաւ հիպնոտիսմի արտապա-
տութիւնները երեք դասակարգի բաժանել, որոնց կնքեց 1) Լեթար-
գիա (անզգացական քուն), 2) Կատալեպսիա (քարացումն
կամ արձանացումն) և 3) Սոնամբուլիսմ (քնացածութիւն
կամ քնաշրջութիւն), անուններով:

¹⁾ Հետեւեցիկան մի նեարդային հիւանդութիւն է. (первая болезнь),
որին եթարգիւած են ոչ միայն կանայք, այլ և տղամարդիկ: Մի ուրիշ անգամ
կը խոսենք այս հիւանդութեան վերայ, առ այժմ կասենք, որ այն անձինք, որոնց
քնուածութիւն է ջլային կոչել, մեծ մասամբ Հիպնոտիսմի են:

Սրանք են հիպնոսական ճնշիչ շրջանները, որոնց ամբողջութիւնը կազմում է Շարկուի Մեծ Հիպնոտիսմը։ Այս երեք շրջաններից ամեն մէկը իւր լատկանիշներն ունի։ Այս լատկանիշները զանազանում են մի շրջանը միւսից, աչնպէս որ կատարելապէս բնորոշում են նրանց։ Հիպնոսական քնի ալս երեք մասերը կարելի է փորձնական (արւեստական) կերպով չարուցանել միեւնոյն անձի մէջ, նրանք առաջ են գալիս լաջորդաբար, մէկը միւսի ետեից, ճալելով թէ ենթական շատ թէ քիչ խոր քնի մէջ է։ Այսպէս լեթարգիան կամ, ինչպէս մենք, թարգմանում ենք անզգագալութիւնը կամ անզգալական քուռը հիպնոսական ճնշիչ առաջին աստիճանն է և ամենախոր քուռն է։ Քարացումն երկրորդ աստիճանն է—միջակքուռը, ալն ինչ քնալածութիւնը կամ սոնամբուլիսմը—երրորդ աստիճանն է և ամենաթեթեւ քուռը, որից մարդ անմիջապէս արթնանում է։

Այս շրջանների լաջորդութիւնը լաւ ըմբռնելու համար մենք առաջ կը բերենք պրոֆ. Վիւկսի տաած համեմատութիւնը։ Նրկակալեցէք ձեզ մի հոր, որի մէջ երկու աստիճաններ կան։ Սրբ մենք քնեցնում ենք մէկին, գցում ենք նրան ալի հորի մէջ և ճաւ ընկնում է ուղղակի հորի լատակը,—ալս լեթարգիան է։ Յետոյ մենք լալտնի միջոցներով բարձրացնում ենք նրան մինչև ճերքնի աստիճանը,—ալս կատալեպսիան է։ Սթէ մենք ալի կատալեպսիին բարձրացնենք մինչև առաջին, ալսինքն վերին աստիճանը, ճաւ կը գառնալ սոնամբուլ կամ լուսնոտի (քնաշրջիկ), որտեղից մենք հնչտութիւնով լուսաշխար կը հանենք և ճաւ կ'արթնանալ։

Մենք կ'ուսումնասիրենք առանձնապէս ալս երեք շրջանները։

ԼԻԹԱՐԳԻԱ, ԿԱՄ ԱՆՁԳԱՅՆՈՒԹԻՒՆ

Անզգայական քնի յաւելութիւնը։—Ձգալարանքների ընդհանուր մակացումը։—Փայլուն գնդերի երեւթիւնները։—Շարժողութեան մակացումը։—Նւաղաւմկանային երևոյթ։

Որ ձևով էլ հիպնոսելու լինենք մենք, (օրինակ, եթէ ստիպենք ենթակալին սեեեւել իւր հալեացքը մի առարկալի վրալ, որը մենք բռնում ենք աչքերի մօտ առանցքից բարձր), մենք կը ճկատենք համարեա միևնոյն բանը։ Կամաց կամաց աչքի կողերը ծանրանում են և սկսում են գողղողալ, մի քանի րոպէից չետոյ աչքերը խփում են, անդամները անշարժ վալր են ընկնում, գլուխը թեքւում է մի կողմը և ամբողջ մարմինը ընկնում է դիակի անշարժութեան մէջ։ Նեթական դառնում է մի անկենդան առարկալ, որը բոլորովին անկարող է մի ամենափոքր շարժում անդամ անել։ Նորա անդամները, ամբողջ մարմինը կարծես կաթւածալարած է, դուք կարող էք նրան ալրել, կտրատել և անել ինչ որ կը կամենաք և ալր դիակը անկարող կը լինի ձեզ մի որ և է ընդդիմադրութիւն ցոլց տալ։

որովհետև նա ոչ տեսնում է, ոչ լսում, ոչ հոտոտում, ոչ ճաշակում.—նա իւր հինգ զգալարանքներից զրկել է:

Հիպնոսի ալս շրջանը հետաքրքիր է նրանով, որ միևնույն րոպէում, միևնույն անձի վրայ մենք նկատում ենք բոլորովին հակառակ երևոյթներ: Մի կողմից կատարեալ անզգալութիւն,—միւս կողմից չափազանց սուր զգալութիւն, մի կողմից կատարեալ անշարժութիւն, կատարեալ մահ մկան-ներէի, միւս կողմից անհատատալի ուժ անդամների մէջ, մի կողմից հա-մարեա կատարեալ անհետանումն խելքի, բանականութեան և հոգեկան ընդունակութիւնների, —միւս կողմից հոգեկան արտալատութիւնների անսովոր չափազանցումն:

Զգացողութիւնը բոլորովին կորած է. նրան կարելի է ծակծկել ասե-ղով, կարելի է մեծ ժախթով ամբողջ թեւ թափանցել, լեթարգիկը (լեթար-գիկը—լեթարգիալի մէջ գտնւողն է) ոչինչ չի զգում. նրա հոտոտելիքը բոլորովին խանգարւած է. դուք կարող էք քթին մօտեցնել ամենաանա-խորժ և ամենասաստիկ հոտեր,—նա ոչինչ չի հոտոտում. Դրէք նորա բե-րանը աղի, կծու, թթու. և ալն ուտելիքներ.—լեթարգիկը համ չի զգում: Սակայն պրոֆ. Լիւլիսի փորձերը ցոյց տւին, որ ալն կաշին, որը ոչ մի զրգում չի զգում, սաստիկ դիւրագրգիռ է դառնում մետաղների ազդե-ցութեան ներքոյ: Այսպէս, եթէ մօտեցնենք կաշուն մի արծաթէ կամ յսկէ դրամ, կը տեսնենք որ ալդ մարմնամասի մկանները ձգձգում են: Բացի ալդ, մի ոսկէ ստակ կաշուն կպցրած կարմրեցնում ու միանգամայն արւում է նրան:

Այս ընդհանուր մահացման մէջ միայն տեսողութիւնը դեռ կենդանի է և մինչև անգամ չափազանցրած է, այնպէս որ գոյնաւոր առարկաները փոփոխում են լեթարգիկի դէմքի արտալատութիւնը: Պրոֆ. Լիւլիսը նկա-տել է, որ մօտեցնելով ենթակալի աչքերին կապուտ գնդակներ, մենք չա-լուցանում ենք նրանց մէջ զղւանք, ալն ինչ դեղին գնդակների տեսքը նրանց դէմքը մեղմացնում է, և նրանք բացում են իրանց աչքերը ու ամբողջ մարմնով ձգւում են դէպի փալուռ առարկան: Պրոֆ. Լիւլիսի կլինիկալում կար մի աղջիկ, էսթեր անունով, որի աչքի առաջ բռնում էին մի բարակ, 5 միլիմետր հաստութիւնով սև աախտակ, իսկ ալդ տախտակի քամակին մի ապակեադուռնդ: Էսթերը աչքերն իսկոյն լալն բանում էր, նորա հալեա-ոտարոտի էր, նորա դէմքը անսահման սարսափ էր արտալատում: Հետը

Շարժողութիւնը նույնպէս բոլորովին մեռած է: Հիւ գլուխը և անդամները անկեանք վալր հն ընկնում, երբ նրան դատարեալ նում ենք վեր և ամբողջ մարմինը մեռածի նման է ու, յիւ շարժում-են, փալաս է գառել: Բալց ղարմանալի է, որ եթէ կամաք նրա առաջ, մուկի երեսը, կը չարուցանենք ձեռի անսովոր ուժեղ կսնաղան ուղղու-Լիւլիսը, չափելով ալս կարկամման ուժը, գտել է, որ ղջ մարմնով, կա-աւելի մեծ է, քան թէ միևնույն անձի և միևնույն ձեռի ըմել իւր անդամ-

կամումն: Այս երևութը պր. Շարկոն անւանում է նկարդա մկանային երևութ (phénomène neuro-musculaire) և միանգամայն բնաորոշ է անզգալական քնին:

ԿԱՏԱԼԵՊՍԻԱ ԿԱՄ ՔԱՐԱՑՈՒՄԸ ԿԱՄ ԱՐՁԱՆԱՑՈՒՄԸ

Քարացումն առաջացնելով լիցոցները.—Անդամների քարացումն.—Մկանների ոլժը.—Աւտոմատիսմ.—Տեսողական և լսողական յուզմունքները.—Յուզմունքներ անգամների գէրքէց առաջացած:

Լեթարգիայի մէջ ենթական հորի խորքումն էր. Գրսի լուսը չէր հասնում նրան, նա թանձր խաւարի մէջ էր և զրկուած էր (և թէ կարելի է ասել) իւր զգալարանքներից, իւր ուղեղից, բայց բաւական է մի աչք բանալ և լեթարգիայի մէջ ընկղմածի աչքերը և նա կը բարձրանալ մի աստիճան: Աւալիսով նա մտնում է հորի ելքին, զրսի լուսը սկսում է թափանձել խաւարի թանձրութիւնը,—նա քարացման շրջանումն է:

Մենք տեսանք, որ լանկարծակի միջոցները (հրացանաձողութիւն, ցիմբալի, բարաբանի լարած, մի խօսքով մի ուժղին և անսպասելի ձայն, կամ ելեքտրական լուս, և այլն) քցում են ենթական ուղղակի կատալեպսիայի քնի մէջ. Ուրեմն, եթէ կամենում ենք արթուն մարդուն ուղղակի կատալեպսիայի, ալսինքն հիպնոսի երկրորդ աստիճանի վրալ զենել—դործ ենք ածում լանկարծակի միջոցները, իսկ եթէ ենթական արդէն լեթարգիայի մէջ է, մենք բացում ենք միայն նորա աչքերը:

Թէ ալս և թէ ալն ձեռով մենք մի մեծ փոփոխութիւն ենք գցում ենթական թէ զգալական և թէ հոգեկան աշխարի մէջ. Սակայն առ երես ոչինչ տարբերութիւն չկալ հիպնոսի ալս երկրորդ և առաջին աստիճանների մէջ. կատալեպսիկը միեւնոյն անտարբեր և անշարժ կերպարանքն ունի, ինչ որ լեթարգիկը, ալն բացառութիւնով միայն, որ առաջինի աչքերը բաց են. Բայց փորձեցէք նրա զգացողութիւնը և նրա ֆիզիկական ոլժը և կը տեսնէք, որ ալդ քարացումն մի բոլորովին տարբեր գրութիւն է:

աչք Քարացման մէջ ամբողջ մարմինը ճշմարիտ որ արձանացած, բանը, ած է. Եթէ բարձրացնէք նրա ձեռքերը կամ ոտները, նրա քանի ռաւանազան կերպով ծալէք, ծռւնէք և, ինչ գրութեան և ընկնում, գլմէջ կամենաք էլ, զրէք նրանց—կը տեսնէք, որ արձանացածի դիակի անշարժ պահպանեն ալդ գրութիւնները. Գուր կարող էք կանգնաց կալ, որը բոլոր մի ոտի վրալ, կռացնել նրա գլուխը, բարձրացնել թևերը, նորա անդամները երկու տակ անել նրան,—որքան էլ անքնական և կարող էք նրան լուր գրութիւնները, կատալեպսիկը, մղարամովից չինած դիակը անկարող կլնպանի ալդ դիրքը տասը—քսան—քսանհինգ րոպէ:

Այդ դեռ ոչինչ, Եթէ արձանացածը պարկած է, դուք կարող էք բռնել նորա գլխից և ամբողջ մարմինը մի փալտի նման բարձրացնել և ոտի կանգնեցնել ու նորա վիզը, մէջքը ու ոտները չեն ծալի: Մի դարմանալի փորձ կալ, որին մենք շատ անգամ ականատես ենք եղել: Այդ հորիզոնական դրութեան մէջ արձանացածին՝ մենք բարձրացնում ենք գետնից ու պարկեցնում երկու աթոռների վրալ ալնպէս, որ զաղաթը մի աթոռի ծալքին լինի, իսկ կրունկները միւսի: Այս դրութեան մէջ կատալեպտիկը տախտակի նման ուղիղ պարկած է օգի մէջ: Այս անբնական երևոյթը նա մանաւանդ զարմանալի է, որ դուք կարող էք այդ ենթակալի կործանին ու փորին զանազան ծանրութիւններ գնել (և մինչև անգամ մի մարդ կարող է նստել) ու նորա մէջքը չէք ծալի:

Այս և սորա նման բազմաթիւ փորձերը ցոյց են տալիս մեզ, որ կատալեպտիկի մկանների մէջ մի աներևակալելի ուժ է զարգանում: Այդ ուժն է, որ սահպանում է նկարագրածս գիրքերը տասնեակ թուղթեր, մինչդեռ արթնութեան մէջ մենք անկարող ենք մի թուղթ անգամ դիմանալ: Պր. Շարկուի փորձերը ցոյց տւին, որ ամենաուժեղ տղամարդը արթնութեան մէջ անկարող է ալնքան երկար պահպանել իւր անդամներին տաճ դրութիւնը, որքան ամենաթուլ կինը քարացման քնի մէջ:

Հիպնոսական քնի ալս շրջանում նկատում է մի չափազանց հետաքրքիր երևոյթ, որը լատինի է աւտոմատիսմ (automatisme) անուանով: Ենթական բարացման քնի մէջ դառնում է մի մեքենալ, որը առանց դադարելու գործում է ալն ուղղութիւնով, որը դուք տալիս էք նրան: Մի առարկայի շոշափումը, նորա տեսքը լարուցանում են նորա ուղեղում ալդ առարկայի գործածութեան միտքը: Այսպէս, եթէ մի կնիք ձեռքի մէջ մի հլուս ու թել դնէք, նա կ'սկսի դուլպա գործել և կը գործի ժամերով անդադար, մի անսանձ մեքենալի նման, կը գործի, մինչև որ ուժերն սպառւեն կամ մինչև որ դուք կանգնեցնէք նորա ձեռները: Այդ բաւական չէ, եթէ դուք թելը կտրէք, նա կանգ կ'առնի, թելը կը կապի և նույն անվրդով և անզգալ կերպով կը շարունակի գործել: Տէք նորա ձեռը մի սանր, նա ժամերով կը սանրի իւր մազերը: Տէք մի տղամարդուն մի սիգար և լուցկիներ, նա կը վառի լուցկին, կը կպցնի իւր սիգարը ու կ'սկսի ծխել: Դրէք նրա ձեռի մէջ սապոն և ջրով լի մի աման, կամ տէք նրան մի գրիչ, կամ մի սանդուխտ, — նա կ'սկսի լացւել, գրել կամ սանդուխտը պատին դէմ արած կ'սկսի բարձրանալ նորա վրալ:

Կապիկութիւն. Գարացման քնի մէջ ենթական կատարեալ կապիկ է դառնում: Նա մեքենալաբար կը կրկնի ձեր բոլոր շարժումները, որքան էլ անմիտ լինեն նրանք: Եթէ դուք կանգնէք նրա առաջ, բարձրացնէք ձեր ձեռքերն ու ոտները, շարժէք նրանց զանազան ուղղութիւնով, կամ մի որ և է շարժում արէք գլխով ու ամբողջ մարմնով. կատալեպտիկը կը լսուի ձեզ, կ'սկսի միևնույն կերպով շարժել իւր անդամ-

ները և, ինչպէս վերեւ տեսանք, կը շարունակի ալդ գործողութիւնը մասերով, առանց դադարելու, բոլորովին մեքենայաբար:

Այս երևութիւն, որը մենք կ'ապրեցինք ինչպէս կ'անւանենք, կարելի է նկատել և խօսակցութեան մէջ: Եթէ դուք նորա ականջին հարցնէք «Ինչպէս էք?»», նա, փոխանակ պատասխանելու, կը կրկնի, «Ինչպէս էք?»:

Արձանացման մէջ ենթական կորցրել է ինքնաշարժութեան ընդունակութիւնը, նորա ուղեղը քնած է, ինչպէս էր լեթարգիալի մէջ, բայց ալդ Նիշըն աւելի թեթեւ է. նորա ուղեղը, եթէ կարելի է այսպէս ասել, աւելի դիւրագրգիռ է, քան թէ առաջիկայ դրութեան մէջ:

Լսողութիւնը, տեսողութիւնը նոյնպէս մասամբ պահպանած են քարացման մէջ, ալն ինչ լեթարգիկը զուրկ է նրանցից:

Այս զգալարանքների գրգռումն անցնում է ուղեղը և տեղ է տալիս զանազան լուզմունքների:

Տեսողական լուզմունքներ. Զանազան պատկերների տեսքը չարուցանում են տարբեր լուզմունքներ: Այսպէս եթէ դուք անցկացնէք կատալեպտիկի աչքի առաջով զւարճալի տեսարաններ, օրինակ մի ծիծաղող երեխայի պատկեր, արձանացածի դէմքի վրա կը նկատէք ցնծութեան Նշույներ, որոնք գնալով կամաց կամաց փոխւում են անսահման երջանկութեան, որը կ'արտապատկերւի զւարթ ծիծաղով:

Ընդհակառակը, եթէ պատկերի պարունակութիւնը տխուր է, նա կատալեպտիկի դէմքի վրայ կը չարուցանի սաստիկ տխրութիւն և վիշտ, որոնք կը պսակւեն դառն հսկեկանքով:

Սրբեմն յարժումները կարողանում են չարուցանել քայացածի ուղեղում համապատասխան լուզմունքներ, որոնք կ'արտապատկեն նրա դէմքի վրա: Օրինակ, եթէ ձեռի պտուղներով դուք կը նմանեցնէք օձի սողալը, ենթակալի դէմքի վրայ սարսափ կը չարուցանէք, իսկ եթէ ձեր շարժումները թռչունի, թռիչք են ձևացնում, նրա սարսափը ուրախութեան կը փոխւի: Այս չրջանումն էլ նկատւում է գոնաւոր գնդերի երևութիւն: Մինեոն տեսակ լուզմունքներ չարուցում են և լսողութեան միջոցով: Երաժշտական տխուր եղանակը կը տխրեցնի և կը լացացնի կատալեպտիկին, իսկ ուրախը—կը զարթացնի և առաջ կը մղի նրան (Մարսելիէզը):

Անդամների գրգռութիւնից առաջացած լուզմունքները: Ֆիզիօլոգիական մի օրէնք կալ, որի զօրութիւնով ուղեղի մէջ ծնած լուզմունքները համապատասխան արտապատկութիւններ են տալիս դէմքին և նպատակաբար շարժումներ անդամներին: Որինակ, բարկացած մարդը սեղմում է բռունցքները և բարձրացնում է ձեռքերը, մինչդեռ գէմքը բարկութեան արտապատկութիւն է ընդունում:

Այսպէս, ուրեմն, ուղեղի գործունէութեան, գծագրութիւնների խաղի և անդամների դիւրքի ու շարժումների մէջ մի որոշեալ կապ կալ:

Բնականաբար կիրքը (ուրախութիւն, բարկութիւն, աղօթք) ծնում է նախ ուղեղի մէջ, իսկ դէմքի և անդամների վրայ նկատած փոփոխութիւնները միայն երկրորդական երևութներ են և չարում են լսող: Այս մի կենտրոնախոյս երևույթ է:

Պրոֆ. Շարկոն ցոյց տւեց, որ քարացման մէջ մենք կարող ենք հակառակն անել: Այսպէս. եթէ արձանացածի ձեռքերը բարձրացնենք և բռնեցքները սեղմենք, նրա աչքերը և ամբողջ դէմքը բարկութիւն կ'արտապատեն: Եթէ նրա մատները շրթունքներին դնենք համբույրի ձեռով, նրա դէմքը քնքշութիւն ու սէր ցոյց կը տալ և կամաց կամաց ձեռը կը հեռանալ շրթունքներից ու կը սկսի օղակն անվերջանալի համբույրներ ուղարկել անչափ սիրահարին: Այս օրինակներից երևում է, որ ձեռքերի նպատակաւորմար շարժումները չարուցում են ուղեղում համապատասխան լուզմունքներ, որոնք և պատշաճաւոր կերպով փոփոխում են դէմքի գծագրութիւնները:

Այս մի կենտրոնաձիգ երևույթ է, որը կարելի է նկատել միայն հիպնոսի մէջ:

Ներափակելով քարացման մէջ նկատւած երևութների տեսութիւնը, պէտք է ասենք, Պօլ Ժանէի խօսքերով.

«Լեթարգիկը կատարեալ դիակ է. նրա բանականութիւնը, ինչպէս և նրա զգացողութիւնը և զգալարանքների գործունէութիւնը ոչնչացած են: Կատալեպտիկը մի աւտոմատ է: Նրա բանականութիւնը խաւարած է, բաց զգացողութիւնները դեռ ալնքան կենդանի են, անդամները ալնքան ազատ, որ նա կարող է տեսնել, լսել և մեքենաւորար մի որոշեալ թւով բնածին, չը խորհած շարժումներ անել, նմանելով մի մեքենայի, որը կը դադարի բանելուց միայն ալն ժամանակ, երբ նրա զսպանակները կը փչանան»:

(Կը շարունակւի)